C. E. P. F. A.

ՖՐՄՈՒԿՅԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ No. 29

25.09.2025




ՍԵՊՖԱ-ի ուսանողների «Մարսելյան արկածները»



ՍԵՊՖԱ-ի մի խումբ ուսանողների համար այս ամառը իսկապես թեժ էր: ACFOA Septèmes-Les-Vallons-ի հետ համագործակցության շրջանակում նրանք մեկնեցին Ֆրանսիայի Մարսել քաղաք՝ մասնակցելու կրթական և մշակութային հագեցած ծրագրի:

Ծրագիրը սկսվեց նոր ծանոթություններով ու բացահայտումներով, ծրագրի նպատակների և կանոնակարգի քննարկմամբ, շրջայցով Սեպտեմ-լե-Վալոնում և հանդիպմամբ Անտառային հրդեհների կանխարգելման համայնքային կոմիտեի ներկայացուցիչների հետ:

Առանձնահատուկ ու երկար սպասված էր նաև հանդիպումը



ֆրանսիացի ընկերների հետ, ովքեր իրենց աջակցությունն էին ցուցաբերել ՍԵՊՖԱ-ում պետանքի խաղադաշտի բացմանն ու պետանքը որպես սպորտաձև ներդնելու գործընթացին: Սկիզբը հագեցած էր, իսկ շարունակությունը՝ էլ ավելի ինտենսիվ: Ֆրանսիա մեկնած մեր թիմը ծանոթացավ կայուն զարգացման և ջրի կառավարման ժամանակակից մոտեցումներին: Սեպտեմ-լե-Վալոնի քաղաքապետարանում ավագանու անդամները ներկայացրեցին համայնքի կայուն



զարգացման ռազմավարությունը: Ուսանողները ուսումնասիրեցին աղբի մշակման և բիոգազի վերամշակման գործընթացները, ծանոթացան անտառների պահպանությանն ու հրդեհների կանխարգելմանը նպաստող սիլվոպաստորալիզմի փորձին, ինչպես նաև Lemon Tri Insertion ընկերությունում հետևեցին թափոնների հավաքման և վերամշակման աշխատանքներին:

Ծրագրի շրջանակում ուսանողները այցելեցին նաև Տուլոն քաղաքի թափոնների վերամշակման կենտրոն և հանդիպեցին Clean My Calanques կազմակերպության ներկայացուցիչների հետ՝ ծանոթանալով ափերի պաշտպանության նպատակներին ու իրականացվող ծրագրերին:

Լեռնային ուղեկցորդների կրթական ծրագիրը՝ Ֆրանսիայից Հայաստան

Հայաստանի արահետներ ծրագրի շրջանակում ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ելենա Մարտիրոսյանը և ծրագրի հայաստանյան համակարգող Նազիկ Մաշուրյանը տեղական գործընկերների հետ այցելեցին Ֆրանսիա՝ մասնակցելու Հայաստանում լեռնային ուղեկցորդների կրթական ծրագրի ներդրման նախապատրաստական սեմինարին: Օտրանում, Շամբերիում և Շամոնիում անցկացված հանդիպումների և այցելությունների ընթացքում ծրագրի մասնա-



կիցները հնարավորություն ունեցան ծանոթանալու ֆրանսիական էկոհամակարգին՝ բնություն-սպորտ փոխկապակցված մասնագիտությունների իրականացման, ինչպես նաև ինստիտուցիոնալ գործառույթների կազմակերպման փորձին: Ուսումնասիրվեցին ԱՖՐԱՏ ընկերության գործունեությունը, ծրագրային մեթոդաբանությունն ու ուսուցման մոտեցումները: Այցի շրջանակում ձևավորվեց միասնական տեսլական՝ Հայաստանում ազգային մակարդակով լեռնային



զբոսաշրջության ուղեկցորդների պատրաստման համակարգի ներդրման համար:
Քննարկվեցին ծրագրի ընթացքը, արդեն իսկ արձանագրված ձեռքբերումները և առաջիկա քայլերը՝ նպատակ ունենալով բարձրացնել նախաձեռնության արդյունավետությունը, խթանել հայ-ֆրանսիական համագործակցությունը և զարգացնել միջազգային գործընկերությունը քայլարշավային տուրիզմի ոլորտում:

Հայ պատվիրակները Լիոնի ՍԵՊՈ-ում

Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Լիոնում էին գտնվում ՀՀ ՏԻՄ ներկայացուցիչները, ինչպես



նաև Հայաստանի և Ժնևի ՄԱԶԾ գրասենյակների ներկայացուցիչները՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների կարիքների հասցեագրմանն ուղղված ծրագրի համատեքստում: Ֆրանսիա կատարած այցի ընթացքում պատվիրակությունն այցելեց Լիոնի ՍԵՊՈ կամպուս, որտեղ ծանոթացավ հաստատության գործունեությանը և ՍԵՊՖԱ-ՍԵՊՈ պատմական գործընկերությանը: Հանդիպմանը մասնակցում էին նաև ՍԵՊՖԱ-ի ներկայացուցիչները՝ տնօրեն Գոհար Գրիգորյանի գլխավորությամբ, ինչպես նաև Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն Տիգրան Թադևոսյանը, ովքեր աշխատանքային այցով գտնվում էին Լիոնում:

Հատուկ դասընթաց. Ֆրանսիական փորձ



Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում ՍԵՊՖԱ-ն հյուրընկալեց Լիոնի ՍԵՊՈ կամպուսի Ներառականության ռեսուրս կենտրոնի պատասխանատու Մարի-Լոր Դյուրանին: Հոկտեմբերի 8-9-ը տիկին Դյուրանը ՍԵՊՖԱ-ի դասախոսների և վարչական անձնակազմի համար իրականացրեց երկօրյա վերապատրաստում, որը նվիրված էր կրթական գործընթացում կրթու-



թյան առանձնահատուկ կարիքներ ունեցող սովորողների կարիքների վերհանմանը, ներառման մեխանիզմներին և ակտիվ մասնակցության խթանմանը: Վերապատրաստումն անցավ ակտիվ քննարկումների, մասնագիտական մոտեցումների և արժեքավոր փորձի փոխանակման մթնոլորտում՝ դառնալով արդյունավետ և ուսուցողական հանդիպում մասնակիցների համար:

Յաղդանցիները վկայականներ ստացան

ՍԵՊՖԱ-ի տնօրեն Գոհար Գրիգորյանը Լոռու մարզի Յաղդան գյուղում հանձնեց հրուշակագործության դասընթացի մասնակիցների ավարտական վկայականները:



Դասընթացի ընթացքում Ցաղդանի բնակիչները ձեռք բերեցին հրուշակագործության գործնական հմտություններ՝ ՍԵՊՖԱ-ի «Խոհարարական գործ» և «Հրուշակեղենի տեխնոլոգիա» մասնագիտությունների գործնական ուսուցման վարպետ Արուսյակ Գրիգորյանի ղեկավարությամբ:
Ծրագիրը նպաստեց մասնակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու նոր զբաղվածության հնարավորությունների ստեղծմանը:

Ուսուցման որակը՝ առաջին պլանում

Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակում ՍԵՊՖԱ-ի ուսումնական գծով պատասխանատուների համար անցկացվեց առցանց վերապատրաստում՝ նվիրված դասավանդողների հմտությունների կատարելագործմանը: Վերապատրաստման նպատակն էր զարգացնել դասավանդողների մանկավարժական կարողությունները՝ նպաստելով ուսուցման որակի և արդյունավետության բարձրացմանը:



Վերապատրաստումն անցկացրեց Լիոնի ՍԵՊՈ կամպուսի մանկավարժական ինժեներիայի պատասխանատու Օրելիեն Բուլարը:

ՍԵՊՖԱ-ի և գործընկեր կառույցների դասավանդողների վերապատրաստումը լաբորատորիայում

Էրազմուս+ IMPROVET_AM ծրագրի շրջանակներում հոկտեմբերի 8-9-ը ՍԵՊՖԱ-ի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասավանդողներ Լ. Պապյանը և Է. Սարգսյանը վերապատրաստում անցան ծրագրի գործընկեր և ՍԵՊՖԱ-ի գործատու հանդիսացող «Հովակիմյան Լաբ» ատամնատեխնիկական լաբորատորիայում: Վերապատրաստմանը մասնակցում էին նաև ծրագրի գործընկեր Գյումրու պետական բժշկական քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասավանդողները: Իր մասնագիտական փորձը մասնակիցներին փոխանցում էր Լիոնի ՍԵՊՈ կամպուսի ատամնատեխնիկական բաժնի պատասխանատու Ան-Լոր Գրիյեն, ով ծրագրի շրջանակում ժամանել էր ՍԵՊՖԱ՝ փորձի փոխանակման, կրթական ծրագրի բենչմարքինգի իրականացման և նոր կրթական մոդուլների մշակման նպատակով: Վերապատրաստման ընթացքում իրականացվեցին գործնական դասընթացներ հետևյալ թեմաներով՝ «Ամբողջական ցիրկոնե պսակների 3D մոդելավորում», «Press կերամիկական պսակների պատրաստում», «Ցիրկոնե պսակների երեսպատում հեղուկ կերամիկայով»: Վերապատրաստումը նպաստեց դասավանդողների մասնագիտական հմտությունների խորացմանը և ուսումնական ծրագրերի արդիականացմանը՝ համահունչ ոլորտի ժամանակակից պահանջներին:



Նոր փուլ քայլարշավային տուրիզմի զարգացման ճանապարհին

Ավարտվեց «Հայաստանի արահետներ» ծրագրի շրջանակում իրականացվող քայլարշավային ուղեկցորդների դասավանդող դառնալու դասընթացը՝ ուղեկցորդների երկրորդ խմբի համար:
Դասընթացը վարեց ԱՖՐԱՏ ուսումնական կենտրոնի դասավանդող, բարձր լեռնային գիդ Լիոնել Կոնֆորը: 90 ժամ տևողությամբ դասընթացի ընթացքում մասնակիցները ուսումնասիրեցին մի շարք մասնագիտական թեմաներ՝ խմբի առաջնորդում, անվտանգության և առաջին օգնության հիմունքներ, օդերևութաբանություն, մանկավարժություն և հոգեբանություն, ինչպես նաև ձնառատ տեղանքում գոյատևման և փրկարարության հմտություններ:

